ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԷԱՃԾՁԲ-12/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15 .02.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից «Մեցցո Պրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Անի Սաղոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 28.11.2018թ. կնքված № ԷԱՃԾՁԲ-12/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ(Կանանց տոն) (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 320 134 (հինգ միլիոն երեք հարյուր քսան հազար հարյուր երեսունչորս ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ Տ և ՀԿ** վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մեցցո Պրոդաքշն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ԵՐԵՎԱՆ Իսահակյան28 1/3տ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570012622840100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02600443
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ՍԱՂՈՅԱՆ

Հավելված N 1
N ԷԱՃԾՁԲ-12/2-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակ	Ընդհանուր գին	Գնման ժամանակացույց
2	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ(Կանանց տոն)	դրամ	1	5320134	08.03.2019թ.

Հավելված N 2
N ԷԱՃԾՁԲ-12/2-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	Համաձայնագրի գին /ՀՀ դրամ/	Վճարումը կիրականացվի 2019թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝									
			Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ
2	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ(Կանանց տոն)	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134	5320134

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

Միջանցիկ կոդ՝ ըստ CPV դասակարգման՝ 2-րդ չափաբաժին 72411300/503

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մեցցո Պրոդաքշն» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ՍԱՂՈՅԱՆ